

Մամուլի հաղորդագրություն

28. 04. 2020 թ.

**ՔՈԱՖ-ի ինստագրամյան հանդիպումը փոխվարչապետ
Տիգրան Ավինյանի հետ է**

ՀՀ փոխվարչապետ **Տիգրան Ավինյանը** ապրիլի 28-ին՝ ժամը 20:00-ին, «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (**ՔՈԱՖ**) ինստագրամյան «**INSTALIVE**» զրուցաշարի հյուրն է:

Պարտերը [ՔՈԱՖ-ի ինստագրամյան ուղիղ եթերում](#) կխոսի COVID-19-ով պայմանավորված իրավիճակի, թվային գործիքների, գրանցված արդյունքների ու հեռանկարների մասին, ինչպես նաև կանխատեսումներ կանի վարակի տարածման տեմպերի և անհրաժեշտ գործողությունների մասով:

Առանձնակի անդրադարձ կլինի մարզերի բնակիչներին, գյուղական համայնքներում կորոնավիրուսի տարածման առանձնահատկություններին և ցուցանիշներին՝ քաղաքային միջավայրերի հետ համեմատությամբ:

Տիգրան Ավինյանը կնշի նաև իր՝ որպես անձի ու պաշտոնյայի առջև ծառայած մարտահրավերները:

Լրագրողներն իրենց հարցերը կարող են ուղղել նախապես Anahit.evoyan@coaf.org հասցեով կամ գրել ՔՈԱՖ-ի ֆեյսբուքյան կամ ինստագրամյան էջերին: Միաժամանակ խնդրում են հաշվի առնել, որ նախապատվությունը տրվելու է հանդիպման մասնակիցների հարցերին:

ՔՈԱՖ-ի INSTALIVE կոչվող առցանց հանդիպումների շարքը հետաքրքիր ու տարբեր ոլորտներում հաջողության հասած հյուրերի հետ զրուցում է արվեստի, առողջության, բիզնեսի, մեդիայի, քաղաքականության, սպորտի մասին: Շաբաթը մեկ օր համերգային ծրագիր է, երբ արվեստագետը հենց մեր եթերում իր գործերն է կատարում: